

ԳԻՐՔԸ՝ «ՄԵԾ ԵՍ ԴՈՒ՝ ՏԵՐ»

ՀԵՂԻՆԱԿ՝ Տ. ԿԱՐԷՆ Ա. ՔՀՆՅ. ԿՏԱՆԵԱՆ

ԳՐԱԽՕՍԵՅ՝ Տ. ԱՐՏԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՇՃԵԱՆ

(Կարճ քարոզներ), Կարեն Ա. Քհնյ. Կտանեամ. Ա. Վարդան Մատեմաշար, հրատարա-
կութիւն Սուրեն Մանուէլեան Հիմնադրամի, Նիւ Եօքը, 1989, 136 էջ:

Չորս բաժնիներէ բաղկացած այս գրքոյկը կը բացուի Ամերիկայի Արեւելեան Թեմի
ներկայ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Եպս. Պարսամեանի հակիրճ մախաբանով, եւ կը փակուի
հեղինակին կեանագրական էջով:

Տ. Կարեն Ա. Քհնյ. Կտանեամ իր ձեռնադրութենէն ի վեր՝ 1948-էն մինչեւ վեր-
ջերս՝ անընդհատ հովուական ծառայութիւն մատուցած է Արեւելեան Թեմի երեք ծուխերու
մէջ: Գրքոյկին մէջ տեղ տուած է հասուն տարիքի իր մտածումները ներկայացնող գրու-
թեանց, 1976-1987 տարիներուն թուղթիմ յամձմուած: Իւրաքանչիւր քարոզիկ կը գրաւէ
միջին հաշուով երկու փոքր էջ: Տէր Կարենի մախադասութիւնները կարճ են, սեղմ եւ
կտրուկ: Հաստատումներ է որ կ'ըմէ եւ կը դիմադրէ ամձմական կարծիք յայտնելու փո-
ծութեան: Անոր հաստատումները կը բխին այն ներշնչումէն որ տարիներ շարունակ առած
է Հայերէն Գրաբար Աստուածաշունչէն, Հայ Եկեղեցւոյ ծիսական մատենաներէն եւ Հայոց
պատմութենէն:

Համոզումով կու տայ իր պատգամները, հոգ չէ թէ իր շօշափած միւրը Աւետարանէն
թեմա մըն է:

Քաջ հովիւն է որ կը խօսի անպաճոյճ բառերով եւ կը յայտնաբերէ իր անկեղծ
հոգածութիւնը հօտի անդամներու մասին: Նախամձայոյց է, երբ կը յորդորէ որ հիւան-
դանոց դարձանուելու զացող իր ծխականները ճշգրիտ կերպով արձանագրել տան իրենց
պատկանած յարամուածութիւնը:

Բացակայ են ինքնագովութիւնը եւ յաւակնութիւնը Տ. Կարենի մօտեցումին մէջ, հոգ
չէ թէ տեղ տեղ կ'ակնարկէ ժամանակակից կարգ մը գրքերու իր ըմթերցումին եւ կամ
ուսման այս կամ այն դասընթացքի հետեւած ըլլալուն, ինքնագարգացման մպատակով:

Տ. Կարենի մտահոգութիւնը, իր այս հաւաքածոն հրապարակուած տեսնելու՝ գեղա-
րուեստական չափանիշով գրող մը հռչակուիլը չէ: Տ. Կարեն, Պօղոս առաքելի ոգիով,
սնմդարար, դիւրամարս կրօնաբարոյական կաթ է որ կը ձգտի տալ այս էջերով: «Իբրեւ
տղայոց ի Քրիստոս կաթմ ջամբեցի ձեզ եւ ոչ կերակուր...» (Ա. Կորնթ. 9, 2): Եւ
բացայայտ է որ սփիւռքի մեր շատ մը համայնքներուն մէջ ուր տակաւին կ'ապրին եւ կը
գործեն Հայերէն ըմթերցող հայեր եւ հայուհիներ, այսպիսի կաթ ջամբող մատենան մը
պիտանի է եւ արժէքաւոր: Մանաւանդ մեր այն հայրենակիցներուն համար որոնք իրենց
ծնունդէն ի վեր տասնեակ տարիներով մնացած են գուրկ կաթ ստամալու իրաւունքէն եւ
պատենութենէն:

«Մեծ ես դու՝ Տէր» տառացիօրէն անգին գիրք մըն է: Կ'արժէ զայն փնտռել, կարգաւ
մէկ շունչով, եւ գնահատել: